

**«2019Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅՑԻ III ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՀԱՐԸ  
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ**

**Հարց 1. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ՝**

ա) Համալիր հարկային ստուգում իրականացնելու ժամանակ ստուգվող կազմակերպությունը կարող է ներկայացնել ճշգրտված հաշվարկներ՝ անկախ այն հանգամանքից ստուգումը ժամանակավորապես կասեցված է, թե՛ ոչ:

բ) կամերալ ուսումնասիրությանը սահմանված ժամկետում չպատասխանելը հանգեցնում է համալիր հարկային ստուգման:

գ) օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված աշխատակցի մասով սահմանվում է տուգանք՝ 300 000 ՀՀ դրամի չափով:

**դ) բոլոր պատասխանները սխալ են:**

**Հարց 2. Եթե կազմակերպության որևէ նյութական պատասխանատու անձ կազմակերպությունից գողացել է որևէ քանակությամբ ապրանքներ, ապա տվյալ պարագայում գողացված ապրանքների մասով իրավունք ունի՞ կազմակերպությունը կատարել շահութահարկից նվազեցում՝**

**ա) այո**

**բ) ոչ**

*(հիմնավորել պատասխանը. առանց հիմնավորման պատասխանը կգնահատվի 0 բալլ):*

**Հարց 3. Եթե տեխնոլոգիական կորուստը գերազանցում է սահմանված նորմատիվային կորուստի մակարդակը, ապա տվյալ նյութերի ձեռքբերման ԱԱՀ-ն ենթակա՞ է արդյոք վերաձևակերպման և շահութահարկով նվազեցման, թե՛ ոչ:**

**ա) այո՛, ենթակա է վերաձևակերպման, սակայն շահութահարկից նվազեցման ենթակա չէ:**

**բ) ո՛չ, ենթակա չէ վերաձևակերպման և շահութահարկով չի նվազեցվի:**

**գ) այո՛, ենթակա է վերաձևակերպման, և շահութահարկից նվազեցման:**

**դ) նշված բոլոր պատասխանները սխալ են:**

**Հարց 4. ՀՀՍՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտի համաձայն՝ արտադրական կազմակերպությունում նշվածներից ո՞րը չի համարվում ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսք՝**

ա) ոչ նյութական ակտիվների ձեռքբերումը:

բ) այլ կազմակերպության բաժնետոմսերի վաճառքը:

գ) տրամադրված փոխառությունների դիմաց տոկոսների ստացումը:

**դ) բոլոր պատասխանները սխալ են:**

**Հարց 5. ՀՀՄՍ 12 «Շահութահարկ» ստանդարտի համաձայն՝ նշվածներից ո՞րը կիրառելի չէ հետաձգված հարկային ակտիվների (պարտավորությունների) չափման համար՝**

ա) հետաձգված հարկային ակտիվները (պարտավորությունները) չպետք է զեղչվեն.

բ) յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կազմակերպությունը պետք է վերանայի հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը և պետք է այն նվազեցնի այն չափով, որքանով այլևս ապագայում հավանական չէ բավարար հարկվող շահույթի ստացում, որը թույլ կտա իրացնել այդ ակտիվից ակնկալվող օգուտները.

**գ) հետաձգված հարկային ակտիվները (պարտավորությունները) պետք է չափվեն իրական արժեքով.**

դ) վերը նշվածներից ոչ մեկը կիրառելի չէ:

**Հարց 6. ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր» ստանդարտի համաձայն՝ ո՞ր պայմանը պարտադիր չէ, որպեսզի կառուցման մեկ պայմանագրում ընդգրկված յուրաքանչյուր ակտիվի կառուցում դիտվի որպես առանձին պայմանագիր՝**

ա) առանձին ակտիվի համար ներկայացվել է առանձին առաջարկ.

**բ) երբ կառուցվող ակտիվներից որևէ մեկի գծով ակնկալվող ծախսումները կգերազանցեն հասույթներին.**

գ) առանձին ակտիվի համար տարվել են առանձին բանակցություններ.

դ) կապալառու ու պատվիրատու հնարավորություն են ունեցել ընդունելու կամ մերժելու պայմանագրի այն մասը, որը վերաբերում է տվյալ ակտիվին:

**Հարց 7. ՀՀՄՍ 8 «Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտի համաձայն՝ արտասովոր հոդվածները՝**

**ա) եկամուտներ կամ ծախսեր են, որոնք առաջանում են այն դեպքերից կամ գործարքներից, որոնք հստակ տարբերակվում են կազմակերպության սովորական գործունեությունից, հետևաբար չի ակնկալվում դրանց հաճախակի կամ պարբերական կրկնվելը.**

բ) ակտիվներ կամ պարտավորություններ են, որոնք առաջանում են այն դեպքերից կամ գործարքներից, որոնք հստակ տարբերակվում են կազմակերպության գործառնական գործունեությունից, հետևաբար չի ակնկալվում դրանց հաճախակի կամ պարբերական կրկնվելը.

գ) գործառնական չհանդիսացող գործունեությունից առաջացած եկամուտներն են և ծախսերը.

դ) այն դեպքերից առաջացած եկամուտներն են և ծախսերը, որոնք իրավական տեսանկյունից կդիտվեն որպես ֆորս-մաժոր:

**Հարց 8. Պաշարների՝ տեխնոլոգիական գործընթացով նախատեսված պահպանման ծախսումների արտացոլում՝**

ա) Դեբետ 712

Կրեդիտ 521.

բ) Դեբետ 714

Կրեդիտ 521.

**գ) Դեբետ 811:**

**Հարց 9. Արտացուլվում է շահութահարկի հաշվարկման նպատակներով դեբիտորական պարտքի դուրսգրումը.**

ա) Դեբետ 714

Կրեդիտ 221.

բ) Դեբետ 331

Կրեդիտ 221.

**գ) Դեբետ 941:**

**Հարց 10. Օտարվող հաստոցին վերաբերող վերագնահատումից արժեքի աճի վերագրումը սեփական կապիտալի այլ հոդվածին.**

ա) Դեբետ 321

Կրեդիտ 331 .

բ) Դեբետ 321

Կրեդիտ 621.

**գ) Դեբետ 321**

**Կրեդիտ 342 :**

**«2019թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ III ՓՈՒԼԻ**

**Խ Ն Դ Ի Ր Ը ԵՎ ՊԱՏԱԽԱՆԸ**

Կազմակերպությունը հանդիսանում է ԱԱՀ վճարող շինարարական ընկերություն:  
2019թ.-ի մայիս ամսին կազմակերպությունը ձեռք է բերել 500 000 հազ. ՀՀ դրամի շինարարական նյութեր, որոնց մասով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել և մինչև 20.06.2019թ.-ը օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացրել է: 3 000 հազ. ՀՀ դրամ արժողությամբ շինարարական նյութեր, ձեռք է բերել ՀԴՄ կտրոնով, որի վրա նշված է եղել գնորդի ՀՎՀՀ-ն:

Նույն հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության կողմից հանձնվել է գնորդին 3 շինարարական օբեկտ, որոնցից`

1-ին օբեկտի կադաստրային արժեքը եղել է 250 000 հազ. ՀՀ դրամ, շուկայական արժեքը` 300 000 հազ., սակայն իրացվել է կադաստրային արժեքով:

2-րդ օբյեկտի կադաստրային արժեքը եղել է 500 000 հազ. ՀՀ դրամ, շուկայական արժեքը` 550 000 հազ., սակայն իրացրել է 400 000 հազ. ՀՀ դրամով:

**Լրացուցիչ տեղեկատվություն`**

2-րդ շինարարական օբյեկտի 50 տոկոսը, համաձայն կազմակերպության և պետության միջև կնքված փոխանակման պայմանագրի, տրվել է պետությանը:

Ձեռքբերումները և իրացումներն ամբողջությամբ վերաբերում են մայիս ամսվան, հաշվետու ժամանակաշրջան է համարվում մայիս ամիսը:

**Որոշել մայիս ամսվա վճարման/հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը:**

**Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն**

1. դտ.

500 000 \* 0,2 -100 000

2. կտ.

1. 250 000 \* 0,2 – 50 000

2. (500 000 / 2)\* 0.2-50 000

ԱԱՀ-ից ազատված (հիմք` 64 հոդվածի 2-րդ մաս, 16 կետ)

3. (500 000 / 2)\* 0.2 - 50 000

**Վճարման/ հաշվանցման ենթակա գումար չի առաջանա:**